



«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
 ОАО «МАКУР ЕРКАТИ ГОРЦАРАН»

(Завод чистого железа)

OJSC «MAKUR ERKATI GORTSARAN»

(Plant of Pure Iron)

375053, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արցախի 75
 375053, Республика Армения, г. Ереван, пр. Арцахи 75
 75, Artsakhi Ave, Yerevan, Republic of Armenia, 375053

Tel.: (374 10) 474260
 Fax: (374 10) 478707
 E-mail: pureiron@arminco.com
pureiron@netsys.am

N80/ 03.05.2017թ.

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ**

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհուրդը 2017թ.-ի ապրիլի 28-ին տեղի ունեցած նիստում որոշում է կայացրել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով գումարելու մասին:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2017թ-ի հունիսի 12-ին, ժամը՝ 11-ին, ՀՀ, ք. Երևան, Խորենացու 15 հասցեում («ԷԼԻՏ ՊԼԱՋԱ» բիզնես կենտրոն), համատեղ ներկայությամբ, հետևյալ օրակարգով.

1. Ընկերության 2016 թվականի տարեկան հաշվետվությունների, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունների և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագրի, հաստատման հարցը.
2. Ընկերության 2016 թվականի արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման հարցը.
3. Տնօրենների խորհրդի անդամ Նիկոլայ Հակոբովի լիազորությունների դադարեցման հարցը.
4. Տնօրենների խորհրդի կազմում Արա Մամյանին ընտրելու հարցը.
5. Տնօրենների խորհրդի կազմում Սիեր Պոլոսկովի, Դավիթ Ղաթախյանի, Եղիշ Ստեփանյանի, Մարկոս Հելլերի վերընտրելու հարցը.
6. Վերստուգող հանձնաժողովի անդամներ Սիեգֆրիեդ Գրուպպի, Գաբրիել Էրբսի, Արման Պետրոսյանի վերընտրելու հարցը:



**Կարեն Հակոբյան
 գլխավոր տնօրեն**